

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ԾՈՒՑԻ ՀԱՅՈՅ  
ՔԱՂՔԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՕՐԲՈՒ

ՀՏՇ. 941 (479.25):325  
Գ.Մ.Դ. 63.3(2Հ)+66.3(2Հ)  
Ը 973

Գիտաժողովը նվիրվում է  
Ծուշի ազատազրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանառու Խմբագիր՝  
**Արտակ Մաղալյան**

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝

**Արամ Սիմոնյան** – ԵՊՀ ռեկտոր, **Վաղիմիք Բարխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բարեկեն Հարուրյունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Արարատ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Ը 973 ԾՈՒԾԻՆ ՀԱՅՈՑ ՔԸՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ. Ծուշի ազատազրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր. – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

Գ.Մ.Դ. 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն, 2007

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ  
Մաշտոցի անվան Մատենադարան

## ՇՈՒԾԻ ՄԱՏԵՆԱԿԱՆ ԺԱՌԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Որքան էլ անսովոր թվա, ճշմարտություն է, սակայն, որ XVIII-XIX դարերում, երբ միջնադարյան ձեռագիր-մատյան-ների ստեղծումն արդեն ավարտել էր իր առաքելությունը, երբ հայոց երկրում կային բազմաթիվ տպարաններ, հասարակական-մշակութային կյանքը թևակոխել էր միանգամայն նոր շիջան, Արցախի վարչական կենտրոն Շուշիում հայ երևելի մտավորականներն ազգային պատմաբանասիրական աշխատություններն ընդօրինակում էին իրենց ձեռքով՝ կարծես հոգեկան անմիջական կապ հաստատելով դրանց հետ:

Այդ անխոնջ երախտավորներից մեկն անվանի տրամաբան և մանկավարժ Յովսեփ Արցախսեցին էր՝ հայ իրականության մեջ տրամաբանության սինթետիկ ընթրննան նախակարապետներից մեկը: 1831 թ. նա ընդօրինակում է «Գիրք տեսական փիլիսոփայության», «Դադագս տրամաբանությանը» և Պաղտասար Դպիրի բանաստեղծությունների ժողովածուն: Ի դեպ, Յովսեփը գրել է նաև բանաստեղծություններ (տես Մատենադարան, ձեռ. 2835):

Ընթերցենք «Սուրբ Վարդանանք» բանաստեղծությունից երկու քայլակ.

«Զարդիր քնարդ Հոգիս Տալիդ  
 Սրտիս աշխույժ վառ և վառ,  
 Վեհ Հիշատակ ախոյանից  
 Ազգիս հնչել ի քո լար:

Ով Հարազատ որդիք արի,  
 Հաղթող վսեմ Հայկազանց

**Եկեղի դաշտոն ի Յավարայր,  
Ուր խումբք հաղթող զյուցագնազարդ»:**

Շուշեցի հայ մտավորականները, որոնք, անշուշտ, հոգով ու նարմնով հավատացյալ քրիստոնյաներ էին, երկի թե այդ բնագավառում բավարարվում էին տպագիր գործերով, մինչդեռ ձեռքով ընդօրինակելու դժվարին ու երկարատև գործը նվիրում էին ազգային գիտարանասիրական նյութերին: Ամավասիկ Մատենադարանի N 3869 և N 2622 ժողովածուները (1850 և 1863 թվականներ), ավելի վաղ՝ 1791–92 թթ. ընդօրինակված մատյանը և մեկ տասնյակից ավելի այլ ձեռագրեր:

Շուշիում ընդօրինակված ձեռագրերի մեջ առավել կարևորվում է Սովուս Կաղանկատվացու «Պատմություն Աղվանիցը» (XIX դ., Մատենադարան, ձեռ. 8035), որն այդ աշխատության առավել ամբողջական տարրերակն է, Քարություն Ալանդարյանի «Դամառոտ բառարան ի ռուսաց լեզվի ի հայս» (Մատենադարան, ձեռ. 10106), Միքայել Աստապատցու «Բժշկարան» ու «Տոմարական աղյուսակը», Դարություն Սելքոնյանի «Քերականություն հայկացյան լեզվին» և այլն: Վատահ կարող ենք ասել, որ հայոց երկրի որևէ այլ մասում, առավել ևս՝ քաղաքում, XVIII–XIX դարերում հայ հոգևոր մշակույթին նվիրված այշափ ընդօրինակված ձեռագրեր չեն եղել: Իսկ Մատենադարանի N 10166 ժողովածուն միջնադարյան գեղարվեստական գրականության ընտրանու գլուխգործոցն է. «Պատմություն Պղնձե քաղաքին», «Պատմություն աղջկան և մանկան», «Խորատ Խոկարոյ», «Խորատ Նուշիրվանի», «Վարք Աղեքսանդրի» և վերջում «Բախտագուշակ»: Այս ձեռագրի հեղինակն է բնիկ շուշեցի Անդրեաս Մուսայելյանը:

Մեզ համար կարևորվում են նաև Շուշիում կատարված նկարագրությունը ավետարանները: Դրանք 3–4-ն են: Դրանցից մեկն ուշադրություն է գրավում իր պատմամշակութային ժամանակագրության արժեքով: Վերջինս կրում է Մատենադարա-

նի 8211 թվահամարը, ընդօրինակվել է Շուշի քաղաքի մոտ գտնվող Շուշա գյուղում 1428 թ.: Այդ գյուղի բնակիչներն էին Շուշի քաղաքի հիմնադիրներն ու առաջին քաղաքացիները: Գրիչը և նկարիչն է Մանվելը: Ձեռագրում առկա են չորս ավետարանիչների դիմանկարները՝ համապատասխան անվանաթերթերով: Նկարները կատարված են միայն կարմրածանուշակագույնով՝ պահպանելով գրաֆիկ գծաեղանակը, տիպիկ XV դարին բնորոշ գործ:

Նկարագարդ մյուս ձեռագրերը XIX դարից են: Դրանց մեջ առանձնացնում ենք Մատենադարանի N 10107 ժողովածուն: Ընդհանուր օրնամենտալ նկարագարդումներից բացի՝ նկարիչ Անդրեաս Մուսայելյանը սույն ժողովածուում ընդգրկված գրական յոր թեմաներից յուրաքանչյուրի նեպքում, սկզբից ևեր, կարծես նախարան, ներկայացրել է մեկական թեմատիկ նկար: Այսպես Փակուչ թագավորի դեպքում վերջինս պատկերված է առաջ սլաքող ծիու վրա նստած: Կոնպոդիցիան այնպես է ծևակորպել, ասես թագավորն ու իր սպիտակ ծին խոշորացույցով նոտեցված լինեն դիտողին: Չես կարող ուշադրություն մեկ այլ տեղ շեղել:

Հայոց լեզվին նվիրված գեղեցիկ ծոն է սույն ձեռագրի 85<sup>ա</sup> էջում ներկայացված հայկական այբուբենի աղյուսակը. յուրաքանչյուր տար վերցված է մեկ առանձին վանդակի մեջ, որը հարստացվել է բուսական գեղեցիկ զարդամուտիվներով: Ընդհանրապես Շուշիում ստեղծված յուրաքանչյուր մատյանում այս թե այն կերպ զգացվում է ազգին ու լեզվին անսահման նվիրվածության գաղափարը:

Այսօրվա հետաքրքրասիրությունների համար ուշագրավ է 104-րդ էջում տեղապորված զոդիակների (գորոսկոպ) անվանացանկը՝ յուրաքանչյուրն իր բացատրությամբ: Իհարկե, լավ կլիներ, որ ներկա մեր բախտագուշակները, հատկապես հեռուստատեսության և ռադիոյի հաղորդավարները ոչ թե կրկնեին օտար մանուկում իրատարակված նյութերը, այլ օգտագործեին մեզանից հարյուր քառասուն տարի առաջ հայոց

Երկրի Շուշի քաղաքում կազմված գորոսկոպի նյութերը:

Տպավորիչ է խաչին գամված Դիսուսի պատկերը 132<sup>թ</sup> էջում: Նայելով այդ նկարին՝ չես ասի, թե նկարիչը իհանալի տիրապետում է հորինվածքի լուծման աստվածատուր շնորհին կամ համաչափությունների պահպանմանն ու ծկի արտահայտմանը, սակայն ֆիգուրի փոքր-ինչ անսովոր շարժումը և ամբողջովին տաք գույներով արված մեկնաբանությունն անմռուց տպավորություն են գործում. ակամա հիշում ես XX դ. Եվրոպական ավանգարդիստական արվեստը:

Կրկին հայրենասիրական մոտիվ է Արարատին և Արաք գետին նվիրված 142<sup>թ</sup> էջը: Պայմանական, մի քիչ էլ ալեգորիկ մտահացմամբ կատարված այս աշխատանքը հայ մարդու հոգու կանչն է, երկի թե նաև դարաբաղցու սերն ու կարոտն իր հինավորց Երկրի խորհրդանիշերի հանդեպ:

«Խաչելությունից» հետո ավետարանական մյուս թեման նվիրված է Մարիամ Սագրադինացու հանդիպմանը Դիսուսին կանաչ պարտեզի մեջ: Պատկերը ստեղծելիս Անդրեաս Սուսայելյանը չի հետևել կանոնական որևէ կարգի. միանգամայն ազատ ու անկաշկանդ մեկնաբանություն, որի խորհրդավորությունն ապահովվում է մուգ շագանակագույնի և կապուտի երանգաանցումներով:

Զեռագիր-մատյանում հանդիպող հաջորդ երեք նկարները գուտ աշխարհիկ-կենցաղային բնույթ են կրում: Այսպես 147<sup>թ</sup> և 187<sup>թ</sup> էջերում գավառական աղջիկներն են կամ երիտասարդ կանայք: Առաջին դեպքում աղջիկը հերարձակ է, երիտասարդ, բաց վզով. ենթադրելի է, թե նկարիչն իր միջավայրից կամ ընտանիքի անդամներից ինչ-որ մեկին է պատկերել: Ցածի մասում կարծես նրա անունն է գրված եղել, որը հետո ջնջվել է: Ցածորդ նկարը, անկախ նրա ով լինելու կոնկրետությունից, ունի ազգագրական կարևորություն: Գավառի գեղեցկություն մենք տեսնում ենք տոնական հագուստներով, արդուզարդով: Կարելի է լրիվ պատկերացում կազմել, թե ինչպի-

սի տարած են ունեցել շուշեցի աղջիկները՝ մազերի երկար հյուսքերը վզի ու ձեռքերի զարդերը, իհարկե, կրկին հագեցված գույներով:

Նկարների այս շարքում առավել գրավիչը ծեռագրի 50<sup>թ</sup> էջում ներկայացված հորինվածքն է՝ վերցված «Պատմություն աղջկա և մանկան» թեմայից: Նկարիչը գործողությունը դիտում է աստիճանների բազրիքի դրսի կողմից: Վերևում ազգային շքեղ տարազով նստած է աղջիկը, ցածից աստիճաններով վեր են բարձրանում երկուսը՝ երիտասարդ տղան և նրա սպասավորը:

Ղմվար է ավարտուն բնութագրում տալ շնորհալի շուշեցու արվեստին: Դա պահանջում է հանգամանալից քննություն ու բաղդատություններ: Այդուամենայնիվ, նախնական դիտարկումների տպավորությամբ, կարող ենք ասել, որ Անդրեաս Սուսայելյանը, պահպանելով միջնադարյան մատենական նկարչության (հատկապես Վասպուրականի) ավանդույթները, այն միաժամանակ շահեկանորեն համատեղել է XIX դարի նոր արվեստի և տեղական ազգագրական նախասիրությունների հետ՝ ստեղծելով ժողովրդական պատկերացումներին հարազատ տեսարաններ: